Շատվան

Բնակչության թիվը՝ 445

Շատվանը գտնվում է Սևանա լճի հարավային ափից դեպի արևելք՝ 17 կմ հեռավորության, ծովի մակերևույթից՝ 2004 մ բարձրության վրա: Այստեղ ապրում են Ադրբեջանի տարբեր շրջաններից բռնագաղթված 200 և Հայաստանի տարբեր շրջաններից վերաբնակված 57 ընտանիքներ:
Շատվանի մասին տեղեկությունները մասնագետները կապում են Խեթական աղբյուրներում հիշատակված հին Հայկական Սութա կամ Շութա քաղաքի հետ, որը նույնացնում են Զոդի հետ: Ուշ ժամանակներում Զոդը մտնում էր Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Սոդք գավառի մեջ և իշխանանիստ էր: Ներկայիս Շատվանը սկզբնական շրջանում եղել է Սյունաց իշխանների յայլաղատեղին և կոչվել է Շութասար:
Հետագայում նույն տեղում հիմնվել է գյուղ Շութասար անվանումով, որտեղ ապրել են իշխանանց տան հոտաղներն ու նախրապանները:
12-րդ դարում տարածքը ենթարկվում է թուրք սելջուկների հարձակմանը: Հուսեյին Կուլի խանը կոտորում է հայ ազգաբնակչությանը և գյուղը դարձնում իր նստավայրը՝ անվանելով այն <<Հուսեյին կուլու աղալու>>:
Այդ անվանումը պահպանվել է գյուղի վրա մինչև 1929թ, որից հետո այն վերանվանվել է Նարիմանլու՝ բոլշեվիկ հեղափոխական Նարիման Նարիմանովի պատվին:
1988թ. դեկտեմբերի 3-ին Ադրբեջանից բռնի տեղահանված 90 ընտանիքներ Շամխորի շրջանի Նուզգեր գյուղից, տեղափոխվեցին Նարիմանլու գյուղ, որից հետո Կիրովաբադից, Բաքվից Խանլարի շրջանի Միրզիկ գյուղից և այլ շրջաններից նրանց շարքերը համալրեցին փախստական նոր ընտանիքներ:
1990թ գյուղը վերանվանվեց Շատվան: Այստեղ գործում է դպրոց, բուժկետ:Բնակչությունը հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ: